

ՆԱԼԵՊ՝ ՏՐՈՓՈՒՆ ՄԻՐՏԸ

Ութը տարուան խաւարէն ետք, Հալէպի բերրը կրկին կը փայլի իր արուեստագետ գաւակներուն լոյսով: Առիթը՝ Սուրիոյ Անկախութեան, Հալէ-



պի ազատագրումին եւ Սուրիական քայլերգի 80-ամեակին նուիրուած շքեղ հանդիսութիւնն էր, որ տեղի ունեցաւ բարձր հովանաւորութեամբ Սուրիոյ Նախագահ տոքթ. Պաշշար ալ Ասատի, Հալէպի բերրի բացօթեայ հռոմէական թատրոնին մէջ, 17 Ապրիլ 2018-ի երեկոյեան ժամը 7:30-ին: Այնտեղ համախմբուած էին 1500 սուրիացիներ, որոնց կարգին Սուրիոյ զբօսաշրջութեան եւ մշակոյթի նախարարները, Սուրիոյ Նախագահի քաղաքական հարցերու խորհրդականը, Հալէպի Նահանգապետը, Նահանգապետարանի գործադիր մարմնի ներկայացուցիչները, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսը, Սուրիոյ Հանրապետութեան Մուֆթին, խորհրդարանի երեսփոխան-

ներ, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդի ներկայացուցիչ՝ Տէր Տաթև Աւագ Բահանայ Միքայէլեան, Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդի ներկայացուցիչ՝ Հայր Էմմանուէլ Վարդապետ Գրիգորեան, Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, իսլամ եւ քրիստոնէայ կրօնապետներ, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ, սուրիացի աստղեր եւ այլք:



«Հալէպ՝ Տրոփոն Սիրտը» վերտառութիւն կրող հանդիսութեան բացումը կատարեց սուրիական բանակի եւ ներքին անվտանգութեան ուժերու փո-

Յուշիկ Ղազարեան
Յովհաննէս Օհանեան
 Շար.՝ 19 2 ➔

ՍԵՄ

Հոգեմատրոյթեամբ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
 100 ԱՄԵԱԿԻ
 ՍՈՒՐԻՈՅ ԿԵՂԻՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ

Կազմակերպութեամբ
ՍԵՄ-Ի ԿԵՂԻՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆՂԷՄ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ
ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Յուցահանդէսին բացումը պիտի կատարուի Չորեքշաբթի, 25 Ապրիլի երեկոյեան ժամը 6:00-ին, ԱՄԺ Տան «Լ. Շանթ» սրահէն ներս:
 Յուցահանդէսի տեւողութիւնն է 26, 27, 28 Ապրիլ 2018, ժամը 11:00-էն 20:00:

نادي الشبيبة السورية الثقافي بحلب
 Գ.Ե.Ս.

Հոգեմատրոյթեամբ՝
 ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲԱՐԵՏԱՆ ՍՈՍՏՆՈՐԴ
 ԳԵՐԸ. Տ. ՇԱՀԱՆ Ս. ԱՐԸ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
103-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

ԱՐԵԱՆ ՏՈՒՉՈՒԹԻՆ
حملة تبرع بالدم
 (بالتعاون مع مركز إدارة نقل الدم بحلب)

Տեղի կ' ունենայ Երեքշաբթի, 24-4-2018 առաւօտեան ժամը 9:00-էն սկսեալ
 Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքևսրահէն ներս:
 وذلك يوم الثلاثاء 24 نيسان 2018 ابتداء من الساعة التاسعة صباحا
 في صالة كنيسة السيدة العجراة. الفيلات - حلب

ԱՂՈՒՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ. «ՄԵՆՔ ԱՅՍՕՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՈՐ ՓՈՒԼ ԵՆՔ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ»

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ՀՀԴ խմբակցության պատգամավոր Աղուան Վարդանեանի ելույթը Ազգային ժողովի յառույց նիստին՝ վարչապետի ընտրության հարցի քննարկումին ընթացքին.

Յարգելի՛ խորհրդարան,
Յարգելի՛ պարոն Սարգսեան,

Ես անցեալից չեմ խօսի: Մինչեւ այժմ արուած-չարուածի գնահատականը պատմութիւնն ու ժամանակն են տալու: Տալու են եւ՛ մեր սերնդին, եւ՛ գլխաւոր դերակատար անձանց: Տալու են՝ գրանցելով նաեւ այն արդիւնքները, որ այս ընտրութեամբ հնարաւորութիւն է ստանում իրականացնել Սերժ Սարգսեանը: Տալու են մեկնելով մի չափանիշից՝ ինչպիսի՛ Հայաստան ու հասարակութիւն ենք ունենալու:



Կը խօսեմ այն խնդիրներից, որ ծառայած են մեր պետականութեան առաջ եւ որոնք, այս փուլում, կարծում եմ, ճշգրիտ են ձեւակերպուած:

Միշտ ասել եմ՝ յառաջիկայ տարիներին կատարուելիքի հիմքում երեք հիմնարար փաստաթղթեր են՝ նոր Սահմանադրութիւնը՝ իր համակարգային փոփոխութիւններով, այս գումարման Ազգային ժողովի առաջին նիստում Հանրապետութեան նախագահի ելույթը եւ Հանրապետական ու Դաշնակցութիւն կուսակցութիւնների երկու համաձայնագրերը՝ համատեղ պատասխանատուութիւն ստանձնելու, երկրում որակական, արմատական բարեփոխումներ կատարելու նպատակադրումով:

Ի՞նչ է ենթադրում նոր Սահմանադրութիւնը, որո՞նք են նպատակներն ու խնդիրները՝ ոչ իմ ձեւակերպմամբ:

«Կը լինի միասնական գործադիր իշխանութիւն՝ վարչապետի գլխավորութեամբ,

Հանրապետութեան նախագահը նոր լիազօրութիւններով կը լինի վերկուսակցական անաչառ արբիտր,

խիստ կը նուազի իշխանութեան անձնաւորումը,

չի լինի իշխանութեան գերկենտրոնացում գործադիր իշխանութեան ղեկավարի ձեռքում, իսկ կառավարութեան քաղաքական պատասխանատուութիւնը խորհրդարանի առջեւ կը նպաստի ջուլտելիալ կառավարմանը, կը բարձրանայ խորհրդարանի ինչպէս օրէնսդիր, այնպէս էլ վերահսկողական դերակատարութիւնը,

երկրում աստիճանաբար կը ձեւաւորուի իշխանութիւն-ընդդիմութիւն երկբեւեռ դասական քաղաքական համակարգ, երկիրը կը կարողանայ անելի ճկուն լինել արտաքին քաղաքական մարտահրաւերներին դիմագրաւելիս, քանի որ քաղաքական որոշումների ընդունման ամբողջ գործընթացը կը լինի անելի հաւաքական:

Սահմանադրական փոփոխութիւնները լաւ հիմք են պետութիւնում քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճումը բացառելու համար:

Սահմանադրական բարեփոխումները նոր փուլ են իրաւունքի գերակայութեան, մարդու հիմնական իրաւունքների ու ազատութիւնների երաշխաւորման ճանապարհին:

Մենք այսօր պայքարի երկու ճակատ ունենք՝ մէկն արտաքին թշնամին է, միւսը՝ ներքին: Արտաքին թշնամուն լաւ ենք ճանաչում, գիտենք նրա դէմ արդիւնաւետ պայքարելու ձեւերն ու եղանակները:

Արտաքին թշնամուց ոչ պակաս վտանգաւոր է ներքին թշնամին: Ներքին թշնամին, որոշակի մտածողութիւն ու որոշակի երեւոյթներ են: Այդ երեւոյթներից ամենավտանգաւորը անարդարութիւնն է:

Անարդարութիւնը ցանկացած պետութեան համար չարիք է, հիւանդութիւն, որը հիւժուում ու թուլացնում է պետութիւնը, որը վերացնում է ապագայի նկատմամբ հաւատը, թուլացնում է պետութեան նկատմամբ սերը, պետութիւնից վանում է իր հազարաւոր զաւակներին: Մենք այսօր, առաւել քան երբեւէ, պայքարի մէկ այլ ճակատ ունենք, որտեղ յաղթանակը ոչ պակաս կարեւոր է: Մենք այսօր պատերազմի նոր փուլ ենք յայտարարում անարդարութեանը:

Պետութիւնը շարունակում է հասարակութեան եւ անհատի մէջ արմատաւորել «կոռուպցիայի հանդէպ գեռօ հանդուրժողականութիւն» մշակոյթը: «Ազնուութիւն գումարած փորձեսիոնալիզմ հանած կոռուպցիա». սա է ցանկալի յաջողութեան բանաձեւը:

Եւական նշանակութիւն ունի եկամուտների բաշխման արդարութեան եւ համաչափութեան ցուցանիշերի բարելաւումը, որ հասարակութեան բոլոր խաւերի համար տեսանելի եւ 2022-ին լինեն տնտեսական աճի արդիւնքները:

Մեծամասնութիւն լինել չի նշանակում բոլոր հարցերի ճիշդ լուծումներն իմանալ: Քաղաքական մեծամասնութիւնն ու քաղաքական փոքրամասնութիւնը ոչ թէ հակառակորդներն են, այլ մեր պետութեան առաջ կանգնած խնդիրների լուծման տարբեր ճանապարհներ տեսնող մարդիկ:

Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեամբ, համագործակցաբար, ուսուսի տուած, տարբեր մօտեցումների համադրմամբ, մենք կարող ենք հասնել արդիւնաւետ լուծումների: Մեր ուժը մեր բազմակարծութեան մէջ է:

Արցախի հարցում ստատուսքոյի փոփոխութիւնը մեզ համար ընդուն-

ՆԱԼԷՊ՝ ՏՐՈՓՈՒՆ...

Սկիզբ՝ 1 Գ

դերախումբը: Ներկաները նահատակներու յիշատակը յարգեցին վայրկեան մը յոտնկայս՝ փողերախումբի շեփորներուն ընկերակցութեամբ: Ապա ցուցադրուեցաւ սուրիական քայլերգի յօրինման պատմութիւնը ներկայացնող յուզիչ տեսերիզ մը, որուն աւարտին բեմ բարձրացաւ սուրիական բանակի զինուորներէն Ամմատ Ալլաուի, որ պատերազմի դաշտին վրայ, բարբարոսական հրթիռակոծումներուն հետեւանքով իր տեսողութիւնը կորսնցուցած ըլլալով մէկտեղ, կրցաւ բոլորին տրամադրութիւնը բարձրացնել իր կամքով ու հայրենասիրութեամբ, երբ ըսաւ. «Ես կորսնցուցի աչքերս յանուն հայրենիքիս, յանուն մեր ժողովուրդին, բայց յուսահատ չեմ, որովհետեւ հոգւոյս աչքերով Սուրիոյ յաղթանակը պիտի վայելեմ»:

Օրուան բեմավարն էր դերասան Մուհամմետ Խէյր ճարրահ, որ նախ հրաւիրեց պարախումբերը, յաջորդաբար՝ Չերքեզ բարեսիրական միութեան պարախումբը, «Գառնի», «Շուշի» եւ «Սարդարապատ» պարախումբերը, որոնք փունջ մը ազգագրական ու ժողովրդային պարերով խանդավառեցին մթնոլորտը: Պարերէն ետք, ներկաները ըմբռնեցին Հալէպի ժողովրդական երգերէն փունջ մը, հանրայայտ Հալէպի երգիչներու կատարողութեամբ, ընկերակցութեամբ՝ Պետական Արաբական Երաժշտութեան, «Նաղամ» եւ «Մշակութային Ժառանգութիւն» նուագախումբերուն, ղեկավարութեամբ խմբավար Ատնան Ֆաթիուլլայի:

Հալէպի բանաստեղծ Սաֆֆուհ Շադդալէ, իր հայրենասիրական բանաստեղծութիւններով գովերգեց Հալէպը, անոր պայքարը ահաբեկչութեան դէմ եւ փառաւոր յաղթանակը:

Հանդիսութեան իր մասնակցութիւնը բերաւ արմատներով հալէպի, միջազգային սոփրանօ՝ Սումէիա Հալլաք, որ Սուրիոյ Պետական Սիմֆոնիք նուագախումբին ընկերակցութեամբ եւ ղեկավարութեամբ՝ նուագախումբին խմբավար մայտէթօ Միսաք Պաղպուտարեանի, ներկայացուց հատուածներ «Այտա» եւ «Քարմէն» օփերաներէն: Աւարտին սիմֆոնիք նուագախումբին միացան «Կոմիտաս» եւ «Սապա» նուագախումբերէն կարգ մը նուագողներ, բեմ բարձրացան «Չուարթնոց» ու «Նարեկացի» երգչախումբերը եւ բոլորը միասնաբար սուրիական հայրենասիրական երգերու շարքով թնաջուցին հնամենի, բայց միշտ կանգուն բերդը: Բոլոր ներկաները դրօշակներ բարձրացնելով, ծափոջիւններով ու հայրենասիրական կանչերով մասնակցեցան երգերուն:

Ձեռնարկի աւարտին բեմ բարձրացան բոլոր մասնակիցները եւ երգչախումբին ու նուագախումբին ընկերակցութեամբ հնչեցուցին սուրիական քայլերգը:

«Հալէպ, ուր ժամանակը պատմութեան վերածուեցաւ» նշանաբանով, այս հանդիսութիւնը կրկին անգամ փաստեց Հալէպի ժողովուրդին կանգուն մնալը, պատմութեան ընթացքին իր ճակատագրական դերը եւ միասնակաւնութիւնը:

Հայկական խումբերու մասնակցութիւնը եկաւ հաստատելու, որ հալէպահայութիւնը՝ Սուրիոյ ողջ ժողովուրդին հետ, մէկ բռունցք կազմած, պայքարեցաւ ահաբեկչական խաւարամտութեան դէմ՝ իր մշակոյթով ու նահատակներով:

Նելի է, բայց միայն ու միայն հիմնահարցի համապարփակ կարգաւորման դէպքում: Արցախի ինքնորոշման իրաւունքի իրացման ու ժողովրդի անվտանգութեան երաշխաւորման ամրագրումն այլընտրանք չունի»:

Այս ընդարձակ հատուածից առաջ ասացի՝ ոչ իմ ձեւակերպմամբ: Այո, այս մեջբերումները Ազգային ժողովում Հանրապետութեան նախագահի 2017թ. Մայիսի 18-ի ուղերձից էին:

Հիմա մենք պարոն Սարգսեանին ընտրում ենք վարչապետ՝ հսկայական խնդիրների ա՛յս բեռով ու պատասխանատուութեամբ: Նաեւ՝ մեջբերումներով վստահ, որ ինքն ամենից լաւ է պատկերացնում մարտահրաւերները, տեսնում անցելիք դժուար ճանապարհը:

Այստեղ գովերգումներն ու հաճոյանալը տեղին չեն, տեղին է Իւրաքանչիւրիս՝ մեր բաժին պատասխանատուութեան ստանձնումն ու ամէնօրեայ աշխատանքը: Մանաւանդ վերջերս պարոն Սարգսեանը խօսել է այս ընթացքում իր անհատական բացառիկ պատասխանատուութեան մասին:

Այս ընտրութեամբ մենք նաեւ բացառում ենք ստուերային կառավարման հնարաւորութիւնը, երբ գործադիր իշխանութիւնը կը ղեկավարէր մէկը, բայց որոշումները կը կայացուէին այլ տեղում:

Յարգելի՛ խորհրդարան, Այսօր Հայաստանի քաղաքացիների մի մասը տարբեր պատկերացում ունի մեր ճանապարհի վերաբերեալ: Իրենց իրաւունքն է: Բայց միայն Հրանդ Մաթեոսեանի՝ «քո ազատութեան սահմանը մինչեւ իմ ազատութեան սահմաններն են» գիտակցումով: Ես վստահ եմ՝ մեր համատեղ առաջադրած նպատակներն ու հետեւողական աշխատանքն են ապահովելու երկրի բնականոն զարգացումն ու անվտանգութիւնը: Մեր մօտեցումներն անելի փաստարկուած են ու գործուն:

Յարգելի՛ պարոն Սարգսեան, Ձեզ մաղթում եմ կամք, իմաստութիւն եւ վճռականութիւն: Որ երբ գայ ժամանակը, կարողանաք հանգիստ խղճով ասել՝ ճակատագրով ինձ վիճակուած բեռը տարել եմ պատուով ու պատասխանատուութեամբ: Հայաստանը ուժեղ, ազատ, արդար երկիր դառնալու անշրջելի ճանապարհին է:

Լուրեր Հայաշխարհին

ՀՀ ՆԱԽԱՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՂՆ ՄԱՐՄԻՆ ԶԱՅԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Վերահաստատելով 2016 թուականի Փետրուարի 24-ին կնքուած քաղաքական համադրոճակցութեան մասին համաճայնագրով եւ 2017 թուականի Մայիսի 11-ին քաղաքական քուալիսիոն կազմաւորելու մասին յուշագրով ամրագրուած ռազմավարական նպատակներին եւ քաղաքական առաջնահերթութիւններին իր հաւատարմութիւնը՝

- Նկատի ունենալով, որ 2017 թուականի Ապրիլի 2-ին կայացած խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքներով եւ քաղաքական քուալիսիոնի յուշագրով ՀՀ-ին է վերապահուած վարչապետի թեկնածու առաջադրելու իրաւունքը,

- Հաշուի առնելով ՀՀ Խորհրդի որոշումը վարչապետի թեկնածու առաջադրելու մասին՝

ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինը հաւանութիւն է տալիս Սերժ Սարգսեանի թեկնածութեանը:

Նոր սահմանադրութեամբ սկսուած համակարգային փոփոխութիւնները արդէն իսկ որոշակի դրական սպասումներ եւ որակական տեղաշարժեր են արձանագրել: Թէեւ մեր երկրում առկայ են բազմաթիւ լրջագոյն մարտահրաւերներ եւ լուծում պահանջող խնդիրներ, սակայն վերջին երկու տարուայ ընթացքում արձանագրուած որոշակի յաջողութիւնները յուսադրում են, որ ընտրուած ճանապարհը ճիշդ է:

Պետական եւ հասարակական կեանքում բեկումնային փոփոխութիւններ կատարելու ուղղութեամբ առարկայական քայլեր ձեռնարկելու հասարակական պահանջ եւ ակընկալիք է ձեւաւորուել, ինչը պարտաւորեցնում է բոլորին:

Մենք գիտակցում ենք, որ յանձնառութիւն եւ պատասխանատուութիւն ենք ստանձնել նոր որակի իշխանութիւն ձեւաւորելու, հասարակութեան մէջ պետութեան եւ ապագայի հանդէպ վստահութիւն ստեղծելու, առաջանցիկ զարգացում, ընկերային արդարութիւն, մրցակցային հաւասար պայմաններ ապահովելու հարցում եւ վստահ ենք, որ յաջողելու ենք:



ՀՀ ՆԱԽԱՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՂՆ ՄԱՐՄԻՆ
14 Ապրիլ 2018

ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆ 77 ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՅԱՐԱՐՈՒ ԸՆՏՐՈՒԵՑՈՒ ՀԱՅԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

«Արմենփրես» կը հաղորդէ, թէ Երեքշաբթի, 17 Ապրիլին, Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովը՝ բաց քուէարկութեամբ, Հայաստանի վարչապետ ընտրեց Սերժ Սարգսեանը: Անոր օգտին քուէարկեց 77 պատգամաւոր, դէմ՝ 17:



Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը առաջադրած էին Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խմբակցութիւնները:

Ընտրութեան առաջ վարչապետի թեկնածու, ՀՀ ղեկավար Սերժ Սարգսեան ելոյթ մը ունեցած է խորհրդարանին մէջ, ուր ներկայացուցած է կառավարման լոր համակարգի առաւելութիւնները, տարբերութիւնը նախորդ կիսամյակի քաղաքական համակարգին:

«Մենք մասնակից ենք նոր սկիզբի», յայտարարած է Սերժ Սարգսեան եւ ընդգծած, որ կառավարման խորհրդարանական համակարգի նախագահը չի կրնար նոյնացուիլ կիսամյակապահական համակարգի նախագահին հետ. այս կառավարման համակարգի վարչապետը խորհրդարանական վերահիւսկողութեան տակ է:

Սարգսեան ընդգծած է, որ անձնական պատասխանատուութեան փախուստը անընդունելի է, այդ պատճառով է, որ Ազգային ժողովի ամպիոնին վրայ կը գտնուի:

Ան անդրադարձած է երկու տարի առաջ կատարած իր այն յայտարարութեան, որ խորհրդարանական համակարգի անցման պարագային ան չի յաւակնիր վարչապետի պաշտօնին: Սարգսեան նախ ընդգծած է, որ արդէն իսկ առիթ ունեցած է անդրադառնալու իր այդ յայտարարութեան եւ հիմա չի խօսիր այդ պաշտօնին իր յաւակնութիւններու իրողապէս բացակայութեան մասին, միայն մէկ նախադասութիւն կ'աւելցնէ. «Այսօր այս ամպիոնին կանգնած է ո՛չ թէ անհատ, քաղաքական, հասարակական գործիչ Սերժ Սարգսեանը, ո՛չ ալ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը, այստեղ անոնցմէ ո՛չ ոք գործ ունի: Այստեղ ելոյթ կ'ունենայ խորհրդարանի քաղաքական մեծամասնութիւնը կազմող ՀՀ-ի նախագահը», յայտարարած է ան եւ ակնցուցած, որ կառավարման խորհրդարանական համակարգը կը բացառէ հակասութիւնը կառավարութեան եւ խորհրդարանական մեծամասնութեան միջեւ, եւ ինք պիտի ըլլայ անոր երաշխաւորը:

Իր խօսքէն ետք Ազգային ժողովի պատգամաւորները Սերժ Սարգսեանին ուղղած են հարցումներ, որոնք կը վերաբերէին Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման հովիտին, Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան, տընտեսական վիճակին, արտագաղթին եւ երկիրը յուզող այլ հարցերու:

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՑԱՅՏԱՐԱՐԵՆ «ԹՄԵՆԵՅ ԶԵՆՍՓՈՒՍՈՒԹՅԱՆ» ՍԿԻԶՐԸ

Երեքշաբթի, 17 Ապրիլ 2018-ին, Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովը Սերժ Սարգսեանը ընտրեց երկրի վարչապետ: Ամբողջ օրուան ընթացքին, առաւօտեան կաւուրի ժամերէն, Երեւանի զանազան փողոցները փակուած էին «Ընդդէմ Սերժ Սարգսեանի վարչապետացման» շարժումին կողմէ, որ կը ղեկավարէ Նիկոլ Փաշինեանը:

Հայաստանի ոստիկանութիւնը որոշում տուած էր դադրեցնելու Նիկոլ Փաշինեանի նախաձեռնած հաւաքը եւ պահանջած հաւաքի ղեկավարէն այդ մասին անմիջապէս տեղեկացնել հաւաքի մասնակիցները:



Սակայն, Ազգային ժողովի պատգամաւոր Նիկոլ Փաշինեանն ու անոր կողմնակիցները փակած են Երեւանի կեդրոնական մասը՝ Սայաթ-Նովա պողոտան, Արուսեան փողոցի մէկ հատուածը, Պոռչեան-Բաղրամեան պողոտայի հատուածը, Դեմիրճեան փողոցը, Հրազդանի ձորէն Հալաբեան տանող ճամբուն սկիզբը: Ֆրանսայի հրապարակին վրայ Նիկոլ Փաշինեանը անգամ մը եւս կոչ ուղղած է փակելու քաղաքի բոլոր փողոցները:

Հայաստանի ոստիկանութեան լրատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան պետ Աշոտ Ահարոնեան տեղեկացուցած է, թէ Հայաստանի ոստիկանութիւնը, վարչական իրաւախախտումներ կատարելու կասկածանքով բերման ենթարկած է Նիկոլ Փաշինեանի նախաձեռնած հաւաքի խումբ մը մասնակիցներ: Կէսօրէ ետք ժամը 2:00-ի դրութեամբ, ոստիկանութիւնը յատարարած է, թէ բերման ենթարկուածներու թիւը հասած է 80-ի:

Երկուշաբթի կէսօրին, Նիկոլ Փաշինեան յայտարարած էր, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ սկսած է «ժողովրդական, թաւշեայ յեղափոխութիւն, որ պիտի յաղթէ, քանի որ այդ յեղափոխութիւնը կարելի չէ կանգնեցնել, այդ յեղափոխութեան առաջնորդը Հայաստանի քաղաքացին է»:

Խօսելով հետագայ քայլերուն մասին՝ ան ըսած էր, որ պէտք է անդամալուծել պետական ամբողջ համակարգը: «Երթով պիտի շարժինք եւ քայլեր ձեռնարկենք կառավարութեան բոլոր շէնքերու գործունեութիւնը անդամալուծելու ուղղութեամբ: Այնտեղ, ուր յաջողինք ներս մտնել, ներս կը մտնենք եւ նստացոյց կը կազմակերպենք, իսկ ուր որ չհաջողինք, մուտքին մօտ նստացոյց պիտի կազմակերպենք», ըսած է Փաշինեան:

Սարգսեան մէջ գտնուողներուն ան կոչ ուղղած է մտնելու նաեւ գիւղապետարաններու շէնքերը:

Փաշինեան յայտնած է, որ իրենց քայլը շէնքերու շրջափակման գործընթաց է, ոչ թէ շէնքերի գրաման գործողութիւն:

Աւելի ուշ, խումբ մը ցուցարարներ փակած են Երեւանի «Յաղթանակ» կամուրջը: Տեղւոյն ոստիկանական աշխատողները փորձած են վերականգնել երթեւեկութիւնը:

Նաեւ Երեւանի քաղաքապետարանի յարակից տարածքին մէջ ցուցարարները փակած են փողոցները եւ անդամալուծած են երթեւեկութիւնը:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹՅՈՒՆ

Տիրաւորական Պողոսեան, իր տիկնոջ՝ Սոնա Խաչատուրեանի 5-րդ տարեկիցին առիթով «Գանձասար»-ին կը նուիրէ 5.000 Ա.Ո.

ՊՁՏԻԿ ԳԻՐՔ ՄԸ՝ ՄԵԾ ԴԵՊԵՐՈՒ ՄԱՍԻՆ

«ՔԵՍԱՊԻ ՊՁՏԻԿ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ. 1919-1922»

ՅԵՂԻՆԱԿ ԶԱՅԿԱԶ ԹՐԹՈՒԵԱՆ



Ս. Մահսեդեան

2017-ի վերջերուն, Յալեպի մէջ լոյս տեսած այս հատորին ծաւալը խաբուսիկ է...


Յայկազ Թրթռեան Զեսապի գաւակ է. թէեւ կեանքին մեծ մասը ապրած է Զեսապէն դուրս...

«Զեսապի Պգտիկ Զանրապետութիւնը» խորքին մէջ յիշատակարան մըն է երկու մեծ իրադարձութիւններու...

Յառաջաբանին մէջ, հեղինակը կը հաստատէ, որ այս հատորով, կը հետապնդէ հիմնական նպատակ մը...

Գիրքը ունի երկու գլխաւոր գլուխ. առաջինը՝ 5 ենթաբաժանումներով, հպանցիկ կերպով կը ներկայացնէ Բ. Աշխարհամարտի օրերուն...

Նակները՝ նախապէս անյաղթահարելի նկատուող Արարայի բարձունքին, որմէ ետք, այս ճակատը փուլ եկաւ...



թիւն ներշնչելով նաեւ շրջանի արարներուն եւ յոյներուն: Ահաւասիկ այս ժամանակաշրջանին կ'ակնարկէ հեղինակը՝ «Պգտիկ Զանրապետութիւն» ըսելով...

Անձնական յիշատակներու եւ ծանօթութիւններու կողքին, հեղինակը լայնօրէն վստահած է 5 աղբիւրներու՝ յուշագրութիւններ ու պատմական ուսումնասիրութիւններ...

Լշտար

ԱՆՏԱՌԻ ՕՐԵՆՔԸ

Անտառի օրէնքը կը շարունակէ գործել, հակառակ որ մեր ապրած դարը Խելքի դար է, ոչ ոյժի, սակայն մարդիկ ու երկիրներ, երեւի չեն կրցած...

Անտառի օրէնքը կը շարունակէ տիրական մնալ, այնքան ատեն որ մտածողներ կան...

Եռեակ յարձակումը Սուրիոյ վրայ փաստեց, որ մեր ըսածը ճիշդ է: Ոյժը խօսեցաւ եւ արդարութիւնը ոտնակոխ եղաւ...

Այս որակումներուն ի տես, ոեւէ տրամաբանող մարդ պիտի ընդվզի եւ ըսէ՝ «Չփաստուած բանի մը պատրուակով, ինչպէ՞ս դուք ձեզի իրաւունք կու տաք 105 հրթիռ տեղացնել ինքնիշխան երկրի մը վրայ»:

Ըստ տուեալներու եւ ցուցադրուած հրթիռակոծուած վայրերու նկարներուն, յարձակումները արդիւնաւետ չեն եղած...

Ուրեմն՝ ինչո՞ւ այս յարձակումը: Զաղաքագետ ու տեսաբան ըլլալու կարիք չկայ, քանի որ գաղտնիքներ չկան այս դարուն...

Ամերիկան քանիցս փորձեց խաղաղաշտ մտնել, սակայն ի գուր, քանի որ Սուրիա ո՛չ Աֆղանիստան է, ոչ ալ Իրաք: Վերջին քաղաքագիտական գլուխ-գործոց յայտարարութիւնը, այն եղաւ, որ պաշտօնապէս Սուրիայէն քաշուելու որոշում հրապարակեց...

Անկէ աւելի բացայայտ տխմարութիւն լսած էիք: Գերպետութիւն մը կը խոստովանի, որ իր զինուորական տեղաշարժերը կը ֆինանսաւորէ Սեւուտական Արաբիան...

Ըստ իրենց, իրենք պատգամ մը յղեցին Փութինին՝ ըսելու, թէ որեւէ պահու կրնան յարձակում գործել. Ռուսիա թող չկարծէ որ դաշտը իրն է:

Ասոր կողքին, կայ այլ իրողութիւն մըն ալ. երեք պետութիւններն ալ ատենը անգամ մը կենդանի թիրախներու կարիք ունին՝ ռազմափորձեր կատարելու եւ իր զենքեր փորձարկելու համար:

105 Թումահոք եւ Զրուզ հրթիռներուն 71-ը վար առնուած են, ըստ օտար դէտերու: Զրթիռակոծուած կեդրոնները նախապէս պարպուած են. զոհեր չեն արձանագրուած, իսկ սուրիացիներն ալ ուրախութեան ցոյցեր կը կատարեն ամէն կողմ...:

Թրամփ, Մէյ ու Մաքրոն որքան յոխորտան, իրականութիւնը այլ բան է: Զիմա, հասցուած հարուածներէն ետք, Ամերիկա կ'ըսէ, որ մասնագետներու խումբ մը պիտի այցելէ Սուրիա, վստահ ըլլալու համար որ Սուրիան իսկապէ՞ս քիմիական զենք օգտագործած է:

Ասիկա Նասրէտտին Խոճային մէկ մանրավէպը կը յիշեցնէ: Զեմ գիտեր, ինչո՞ւ, թէ լամ:

Յակոբ Միքայէլեան

Ուշագրաւ է նաեւ, որ հատորը ամբողջութեամբ «արտադրուած» է Սուրիոյ մէջ. բովանդակութեան պատրաստութիւնը կատարուած է Զեսապի մէջ, իսկ տպագրութիւնը՝ Յալեպ, «Արեւելք» տպարանէն: Սա, իր կարգին, այլ գործնական վկայութիւն մըն է, որ Յալեպի մեր գաղութը վերստին կը քալէ մշակութա-

յին-իրատարակչական այն ուղիէն, որ զինք յատկաշարժ է տասնամեակներէ ի վեր, որ պահ մը դանդաղու մի մատնուեցաւ ահաւոր պատերազմին հետեւանքով: Աւելի քան տարիէ մը ի վեր, հայկական աշխարհը աճող գոհունակութեամբ կը հետեւի գաղութի վերականգնումին:

Ե՞Ս ԵՒ, ԹԵ ԻՆՔՆ ԵՐ ՔԱՐԵՆ ԵՓՓԵԻ ԻՍԿԱԿԱՆ ԹՈՒՆԻԿԸ

Բ.



Տիրուկ Մարգարեան - Կարապետեան

Անտու մը, անուշաբոյր սուրճը ձեռքիս նստած կը գրուցէիք, երբ Ռոզան հարցուց Յայոց Յեղասպանութեան մասին: Բաւական պատմելու ետք ըսի. «Եկու՛ր, անգլերէն վաւերագրական շարժապատկերներ դիտենք, որ ւաւելի շատ տպաւորուիս ու ըմբռնես բոլոր՝ պատմածներս»:

Ինչէր դիտեցիք... «Մայրիկ», «Մեծմայրիկիս Դաջուածքները», «Արտոյտներու Ազարակը», «Յոգիներու Աճուրդը», «Յայոց Յեղասպանութիւնը» եւ տակաւին շատ մը շարժապատկերներ, որոնք խոռվեցին անոր մատողաշ հոգին: Երբեմն ժամերը ակնթարթի մը արագութեամբ կը սահէին ու ան հրաժեշտ տալով կը մեկնէր՝ խոստանալով ամբողջացնել շարքը:

Օր մը, երբ Յայաստանի տեսարժան վայրերուն մասին կը խօսէի, ուզեցի դիմատետրիս վրայ տեղադրած նկարներս ցոյց տալ անոր:



Ահա՛, ճիշդ այդ վայրկեանին, շղթային բաժնուած օղակները պիտի գային եւ իրարու միանային:

Դիմատետրի էջս բացի ու տեղ մը «Սթա՛փ /կեցի՛ր/», ըսաւ ան: Չարմացած նայեցայ աչքերուն, որոնք մէկ կէտի վրայ սեւեռած էին՝ Karen Jeppe Armenian College-ի «Քարեն Եփփէ» անուան վրայ:

- Այս անունը դանիական է:
- Այո՛, դպրոցիս անունն է:
- Դանիական դպրոցէ՞ շրջանաւարտ ես:
- Ո՛չ, հայկական, սակայն Քարեն Եփփէ Մայրիկին անունը կը կրէ դպրոցս:
- Մայրիկ՛կ:

Ու սկսայ պատմել դպրոցիս հիմնադրման տարիներուն, Յայոց Յեղասպանութեան, Քարեն Եփփէ Մայրիկին գործունէութիւններուն, մարդասիրական կեցուածքին ու հայ ժողովուրդին հանդէպ անոր ցուցաբերած մայրական վերաբերմունքին մասին: Ըսի, որ մենք՝ հայերս, որպէս երախտագիտութիւն, Մայրիկին կիսանդրին տեղադրած ենք իր իսկ անունը կրող դպրոցի շրջափակին մէջ: Յիշեցի նաեւ, որ անոր գերեզմանը կը գտնուի Յալէպի Ազգային գերեզմանատան մէջ եւ վերջերս, գերեզմանատան ազատագրումէն ետք, աղօթքն ու խունկը վերսկսած են երկինք բարձրանալ եւ Մայրիկին հոգին վերագտած է իր նախկին խաղաղութիւնը:

Այդ պահուն, միտքս սուրբազ դէպի անցեալ, նախ գտաւ եօթերորդ

կարգի աշակերտուին, որ կիսամեայ քննութիւնները դիմած պահուն, «Տիգրանեան» սրահին ճակատը կախուած Մայրիկին պատկերին նայելով, մտովի օգնութիւն կը խնդրէր իրմէ եւ հարցումներուն պատասխանները գուշակել կը փորձէր, ապա դպրոցին բակին մէջ ինկած, ծունկը վիրաւորած եւ Մայրիկին կիսանդրին յենած, լացող իններորդ կարգի աղջիկը տեսաւ, ետք՝ դարձեալ «Տիգրանեան» սրահին մէջ, Նոր Տարուան դպրոցական տոնախմբութեան ընթացքին, դասընկերներուն հետ պարելու ժամանակ թփռտաքող սրտով ու Մայրիկին հետապնդող աչքերէն փախչող տատերորդ կարգի դեռահասի մանկամարդը նկատեց, քիչ ետք, Մայրերու Օրուան առիթով, իր աշակերտներուն հետ Մայրիկին գերեզմանին կողքին Տերուական աղօթք շնչացող ուսուցչուհին նշմարեց, եւ վերջապէս, աշխարհի չորս ծագերէն

Երեւան ժամանած ու ցեղասպանութեան թանգարանին մէջ, Մայրիկին պատկերին դէմ համախըմբուած, ճեմարանաւարտ ուսուցչուհիներուն մէջէն առաւ զիս ու նետեց ներկային գիրկը:

Ի՛նչ քաղցր օրեր եւ անմոռանալի յուշեր: Աստուած իմ, արդեօք ե՞րբ պիտի կարենամ երթալ ու տեսնել այն ամենը, որուն մասին խօսիլն անգամ կ'ալելոծէ հոգիիս ովկիանը: Ե՞րբ պիտի կարենամ սիրելի դուպրոցս այցելել ու անոր պատերուն ականջ տալով լսել ճեմարանական բոլոր սերունդներուն արձագանգը:

Մնամ ներկային գիրկը, մտածեցի, ու շարունակեմ պատմել այդ քակուած շղթայի օղակներուն միացումին մասին: Երիտասարդուհին օտարական մը չէր այլեւս. ան Քարեն Եփփէ Մայրիկին երկրէն ժամանած, անոր թոռներէն մին էր պարզապէս: Ես ու ան հանդիպած եւ մտերմացած էինք արդէն այսքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ ու մասամբ, Քարեն Եփփէին կը պարտէինք մեր մտերմութիւնը:

Քարեն Եփփէ Մայրիկին պէս ազնիւ, մարդասեր ու բարեսիրտ էր ան, այժմ հայաստանիս ան ալ գումարուած էր այդ յատկութիւններուն վրայ: Մայրիկին բոյրն ու շունչը կրող այս օտարականը հարազատս դարձած էր արդէն: Իմ հեռու, միաժամանակ մօտիկ հարազատս...

Այսպիսի ջերմ ապրումներով սկսանք դիտել Մայրիկին եւ դանիացի այլ միսիոնարներուն մասին

վաւերագրական շարժանկարներ: Յառաջիկայ օրերուն, այցելեցիք Ճիպէյի Թռչնոց Բոյն: Շրջափակին մէջ գտնուած, հայ որբերու Մայրիկ Մարիա ճեղքաբեր շիրմաքարին մօտ «Յայր Մեր»ը աղօթելէ ետք, ուղղուեցանք դէպի թանգարան: Դո՛ւ՛՛ որբանոցին մուտքին տեղադրուած որբուկներուն արձանները ու անոնցմէ արձագանգող սուր ճիչը, օգնութեան աղերսները փայտացուցին ոտքերս, որոնք չկրցան շալկել ու դէպի ներս առաջնորդել զիս:

Դուրսը՝ Յայոց Յեղասպանութեան նուիրուած քանդակին մօտ, սպասեցի երիտասարդուհիներուն վերադարձին: Կես ժամ ետք, Ռոզա եւ ընկերուհիները լռակեաց մօտեցան ինձի, քալելով ուղղուեցանք ծով ու անոր ալիքներուն յանձնեցիք մեր յուզումն ու վրդովմունքը:

Օրերը սիրոյ ու երախտագիտութեան ապրումներով, անքակտելի հանգոյցով աքուցեցին մեր սրտերը: Հասած էր Ռոզայէն բաժնուելու պահը: Հրաժեշտ տուինք այն խոստումով, որ օր մը անպայման պիտի համախմբուինք Յայաստան՝ տեսնելու այն ամենը, որուն մասին օրերով խօսած էինք: Օր մըն ալ, խաղաղութեան աղանիւներու վերադարձին ւաւետիսը իմանալով, պիտի այցելէիք Յալէպ, քնականաբար Քարեն Եփփէ Ազգային ճեմարան ու Ազգային գերեզմանատուն: Դո՛ւ, ձեռք-ձեռքի, բարեկամութեան մեր խոստումը պիտի ամրագրէիք:

Ռոզա վերադարձաւ իր ծննդավայրը: Մեզ կապող հանգոյցը մնաց անքակտելի: Համացանցի առաւելութենէն օգտուելով ծնողներուն ալ ծանօթացայ ու մտերմաբար գրուցեցի անոնց հետ: Բարեկամուհիս, արձակուրդին, ընտանիքի անդամներուն համար ինձմէ սորված ճաշերը եփած ու իբրեւ ապացոյց նկար մըն ալ դրկած էր ինձի: Ես ալ նըռնենիս մակր պտուղներուն նկարը դրկելով, զանոնք համատեսելու հրաւիրած էի զինք:

Բալի մը չափով, ընդամենը քանի մը հատիկ պարունակող չորս-հինգ նուռերը կերայ: Կեանքիս կեանք տուին անոնք ու պարտեզ մը ունենալու ցանկութիւն յառաջացուցին մէջս: Վարուցանքին հանդէպ հետաքրքրութիւն չունեցող մը, ահա՛, այդ աննշմար նուռերուն շնորհիւ պիտի դառնար հողի սիրահար, արտ մշակել փափաքէր, սակայն

ո՛ր, ե՞րբ կամ ինչպէ՛ս... չէր գիտեր: Այդ մէկը ձգած էր Աստուծոյ տնօրինումին... ժամանակին: Արդեօ՞ք զինք հաւատքով ու յոյսով պարուրող այս նռնէին, կամ նռնէին նուիրողն ու ճամբայ հանողն ալ ինք չէր...:

Ամիսները թաւալեցան, ու ես Քոփէնհակի համալսարաններէն մեկուն մէջ պատմութիւն ուսանող հարազատես ստացայ նամակ մը, ուր կիսամեայ քննութեան նիւթին մասին տեղեկութիւն կու տար ու շնորհակալութիւն կը յայտնէր ցեղասպանութեան մասին բոլոր պատմածներուս եւ մեր դիտած վաւերագրական շարժապատկերներէ-



րուն, ի մասնաւորի «Մեծմայրիկիս Դաջուածքները»ուն համար: Այս վերջինին ազդեցութեամբ գրած էր «Բնութիւնն ու Անոր Յառաջացուցած Հոգեբանական Խոր Վերքերը» խորագրով իր քննութեան նիւթը:

Մեկ ամիս առաջ, երկրորդ ու բաւական ազդեցիկ նամակով մը ան կը յայտնէր, որ Յայոց Յեղասպանութեան մասին գրած իր նիւթը արժանացած է դասախօսներուն բարձր գնահատանքին: «I got the highest grade», կը գրէր ան:

Տարիներէ ի վեր հայրենասիրութիւն ջամբած եմ աշակերտներուս ու անոնք, փոխադարձաբար, բարի պտուղներ հրաւցուցած են ինձի, խոստովանիմ սակայն, որ զիս ամենէն ւաւելի ոգեւորող հեռաւոր Դանիոյ «աշակերտուհի»իս մատուցածն էր:

Այս տարի մեր դպրոցին հիմնադրութեան տօնատանու ամենայնէ ու ես աշխարհով մէկ սփռուած շէնշող ճեմարանականներուն կը նայիմ ու բոլորիս բնօրրան՝ Քարեն Եփփէ Ազգային ճեմարանին բերրի հողին, արեւուն ու անձրեւին փառք կու տամ, կը խոնարհիմ Մայրիկին նուիրական ոգիին առջեւ, Դանիոյ ժողովուրդին երախտագիտութիւնս կը յայտնեմ ու Ռոզային կ'ըսեմ. «Բարի եկար, մեր Մայրիկին ու ձեր Քարեն Եփփէին հարազատ թոռնիկը. հայրութեան գիրկը բարի եկար, հազա՛ր բարի»:

«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Մեւան Ասատուրեան-Մանճիկեանի

«Քեսադ... 2014 Տեղաւարտութիւն եւ Վերադարձ»

գիրքը, մեկենասութեամբ Յուլեր եւ Շողեր Մանճիկեաններու, Տպարան «Արեւելք» 2017:



Ռաֆֆի Միլսահեան

ՀԱՅԿԱԿԱՆ

-Վարդան Մինասեան Կրկին Ստանձնեց Հայաստանի Հաւաքականի Մարզիչի Պաշտօնը

Հայաստանի ֆուտբոլի Դաշնակցութեան կայքին համաձայն, Հայաստանի ֆուտբոլի Ազգային Հաւաքականի նախկին գլխավոր մարզիչ Վարդան Մինասեան (44 տարեկան), կրկին ստանձնեց երկրի հաւաքականի մարզիչի պաշտօնը: Հայաստանի կազմը, Ազգերու Լիգայի ֆուտբոլի մրցաշարքին նախապատրաստուելու համար, յառաջիկայ ամիսներուն ծրագրած է իրագործել ֆուտբոլի բարեկամական մրցումներ: Ազգերու Լիգայի մրցաշարքին Հայաստանի մրցակիցները պիտի ըլլան Մակեդոնիա, Ճիպրալթար եւ Լիխթենշտայն: Յիշենք, որ Մինասեան 2009-2013 ժամանակամիջոցին վարած է նոյն պաշտօնը:

12 Ապրիլին «ՖԻՖԱ»-ն հրապարակեց նաեւ աշխարհի ֆուտբոլի հաւաքականներու միջազգային տրոփաբաժնի ֆուտբոլի Ազգային Հաւաքականը 7 դիրքով նահանջ արձանագրած է այդ ցանկին մէջ՝ գրաւելով 98-րդ դիրքը:

Միտիթարեան Երկու Շաբաթ Վերջ Ապաքինուած Կ' ըլլայ

Հայաստանի ֆուտբոլի Ազգային Հաւաքականի եւ Լոնտոնի Արսենալի կիսապաշտպան Դենիս Միտիթարեանի վերջնական ապաքինման համար երկու շաբաթ կը պահանջուի: Միտիթարեանի ծունկը վնասուած է: Ան խաղադաշտ պիտի վերադառնայ շուրջ երկու շաբաթ ետք: «Միտիթարեան շատ լուրջ դարմանումի կ'ենթարկուի», յայտնեց Արսենալի պաշտօնական կայքի գլխավոր մագիչ Արսեն Վենկըր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

-Ծանօթացում Ռուսիա 2018-ի Մասնակից Հաւաքականներու Պատմականին

«ԹԻԻ - 19»

Անգլիա

Անգլիոյ ֆուտբոլի պատմութիւնը սկսած է 1863-ին: Խումբը ֆուտբոլի միջազգային ընտանիքին մաս կազմեց 1905-ին: Անգլիա եղաւ ֆուտբոլի հիմնադիրներէն մէկը: Ան միջազգային իր առաջին մրցումը կատարեց 1872-ին՝ մրցակից ունենալով Սքոթլանտան: Սոյն մրցումը, տեղի ունեցաւ 30 Նոյեմբեր 1872-ին եւ աւարտին հասաւ 0 - 0 հաւասար արդիւնքով, որ կը նկատուի ֆուտբոլի պատմութեան միջազգային առաջին մրցումը: Թէեւ Անգլիա նշանաւոր է իր ակումբներով, որոնք եղած են աշխարհի ամենէն հարուստ ակումբները, բայց հաւաքականը կրցած է միայն մէկ անգամ՝ 1966-ին ձեռք ձգել համաշխարհային ախոյեանութիւնը: Այս տարի, Անգլիա 15-րդ անգամ ըլլալով իր մասնակցութիւնը պիտի բերէ համաշխարհային մրցումներուն: Ան ինը անգամ մասնակցութիւն բերած է Եւրոպայի ախոյեանական մրցումներուն: Հաւաքականի գլխավոր մարզիչն է Կարիէթ Սաուտիլթը, իսկ խումբին պաշտօնական տարագին գոյնը ճերմակն է:



հիմնադիրներէն մէկը: Ան միջազգային իր առաջին մրցումը կատարեց 1872-ին՝ մրցակից ունենալով Սքոթլանտան: Սոյն մրցումը, տեղի ունեցաւ 30 Նոյեմբեր 1872-ին եւ աւարտին հասաւ 0 - 0 հաւասար արդիւնքով, որ կը նկատուի ֆուտբոլի պատմութեան միջազգային առաջին մրցումը: Թէեւ Անգլիա նշանաւոր է իր ակումբներով, որոնք եղած են աշխարհի ամենէն հարուստ ակումբները, բայց հաւաքականը կրցած է միայն մէկ անգամ՝ 1966-ին ձեռք ձգել համաշխարհային ախոյեանութիւնը: Այս տարի, Անգլիա 15-րդ անգամ ըլլալով իր մասնակցութիւնը պիտի բերէ համաշխարհային մրցումներուն: Ան ինը անգամ մասնակցութիւն բերած է Եւրոպայի ախոյեանական մրցումներուն: Հաւաքականի գլխավոր մարզիչն է Կարիէթ Սաուտիլթը, իսկ խումբին պաշտօնական տարագին գոյնը ճերմակն է:

-«Չեմփիընզ Լիկ» Ռիալ - Բավարիա Հակամարտութիւն

ՌԵՖԱ-ի նստավայրին մէջ տեղի ունեցաւ

Չեմփիընզ Լիկի կիսեզրափակիչ փուլի վիճակահանութիւնը: Գործող ախոյեան Ռիալ Մատրիտի մրցակիցը պիտի դառնայ Գերմանիոյ ախոյեան Պայերն Մյունխը, իսկ Լիվըրփուլը պիտի մրցի Զոմմի Ռոմայի հետ: Կիսեզրափակիչ փուլի առաջին խաղերը տեղի պիտի ունենան 24 եւ 25 Ապրիլին, իսկ դարձի հանդիպումները՝ 1 եւ 2 Մայիսին:



ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՍԸՄ-Ը... ՎՍԿԻՊՐ՝ 1,2 4

ուած, պահելու համար մեր կրօնական, մշակութային եւ մարզական բոլոր շարժումները մենք դարձրել շարունակ աշխատած ենք ազգայնացնել գանոնը:

Առաջին քրիստոնեայ ազգն ենք, ինչպէս նաեւ առաջինը մեր եկեղեցին ազգայնացնողը:

ՀՍԸՄ-ը մեր մարզական շարժումը հայացուց, ազգայնացուց: Անոր տուաւ հայ հոգի, հայ դիմագիծ: ՀՍԸՄ-ը հայացուց նոյնիսկ սկաուտական նշանաբանը «Միշտ պատրաստ»-ը փոխելով «Բարձրացիր-Բարձրացրո՛ւր»-ի:

ՀՍԸՄ-ը իր հիմնադրութեան օրէն ի վեր մեր մարզական եւ սկաուտական շարժումները ազգայնացուց, եւ այդ պատճառաւ հայ ազգը ինքզինք հարազատ կը զգայ այս միութեան:

ՀՍԸՄ-ը երբ հազարներով կը տողանցէ, հայ ժողովուրդը ձեր մէջ կը տեսնէ հայկական բանակը, անկախութիւնը եւ զայն խորհրդանշող եռագոյնը: Անոնք ձեր մարզական մրցանիշներով եւ յաղթանակներով շատ ալ չեն հետաքրքրուիր, այլ անոնք ձեզ կը տեսնեն ուխտաւորները այն բանակին, որ գինուորն է հայոց պայքարին, որուն նպատակն է հայ մնալ եւ հետապնդել Ազատ Անկախ Հայաստան ստեղծելու իտեալը:

Երբ դուք կ'ուխտեք եւ երդում կը կատարեք եռագոյնի, հայրենիքի եւ պատուոյ վրայ, դուք կը դառնաք գաղափարապաշտ գինուորները հայ դատին:

Ճշմարիտ ՀՍԸՄ-ականը ուխտեալ գինուորն է հայ դատին: Ֆետայի փափախին տեղ այսօր սկաուտի գլխարկը ձեր գլխուն, վաղը որպէս ուսուցիչ, բժիշկ, արհեստաւոր կամ գործաւոր միակ մէկ նպատակին պէտք է ձգտիք, մնալ ու ապրիլ որպէս հայ եւ նուիրուիլ անկախութեան պայքարին:

Այս բոլոր ըսուածները ամփոփելով պիտի եզրակացնեն: ՀՍԸՄ-ը

ծնաւ ամենադժուարին պայմաններուն տակ: Ան իր նպատակը դարձուց վերականգնել ընկճուած հայութիւնը եւ դարձաւ ազգային միութիւն մը, բխած հայ հոգիէն եւ հայ միտքէն:

Եւ եթէ դուք, ձեր մարզական եւ սկաուտական շարժումներէն եւ գործունեութենէն դուրս, պիտի չմտածեք հայութեան եւ հայապահպանման գործի մասին, պիտի ըսեմ, որ դուք իրաւ ՀՍԸՄ-ականներ չէք:

Ձեր ուխտն է ծառայել ժողովուրդին եւ զայն դէպի անկախութիւն տանող դժուար ճամբուն վրայ մնալ ուխտեալ գինուորներ:

Եթէ այս ըսածներէս փոքրիկ նշոյլ մը առկայծէ ձեր հոգիներուն մէջ, վստահ եղէք, որ դուք պիտի տոչորուիք ազգայնականութեամբ եւ ալ անելի պիտի սիրեք եւ պիտի փարիք այն մեծ միութեան, որն է ՀՍԸՄ-ը:

«ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ...» ՎՍԿԻՊՐ՝ 1,2 4

որուն պատուհաս դարձաւ՝ զիրենք բանտարկելով, սպաննելով, կողոպտելով եւ կիները առեւանգելով: Ան իրագործելու համար իր նենգ ու ստոր դաւերը, իրեն մեղսակից ընտրեց այնպիսի չարամիտ յանցագործներ, ինչպիսիք են՝ դատարանի ղեկավար Խալիլ Ատիպը, Հաճի Չաքին եւ Եղբայրը, Պատրիկ, Մամտուհը, Թաուֆիքը, Հարոնը եւ ուրիշներ, որոնց անունները յառաջիկային պիտի տեսնենք:

Անխոռով Մարտին գործուղուած յանցաւոր այս խմբակը, գինուած Ռաշիտ պէլի հրամանագիրներով, արեան խնձորներ կազմակերպեց, կոյսեր բռնաբարեց, երկրէն քրիստոնեաները տեղահան ընելով զիրենք անմարդաբնակ վայրեր քշեց եւ լեռներու ու ձորերու մէջ խոշտանգելով ոչնչացուց: Այս առթիւ ի յայտ եկան թաքուն ատելութիւններ եւ կեղծ վկայութիւններու լոյսին տակ, տեղի ունեցան անմարդկային հաշուէտարդարներ:

(Շար. 1)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Օհաննեսեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՕՂԱՆՆԵՍԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեայի քառասունչի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 29 Ապրիլ 2018-ին, յաւարտ Ս. եւ Աննահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, Նոր Գիւղ - Հայկա:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ դահլիճէն ներս:



Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի, Կազմակերպութեամբ Ուսումնական Խորհուրդին, Կիրակի, 15 Ապրիլ 2018-ի երեկոյեան ժամը 6:00-ին, «Գեորգ Եսայեան» սրահէն ներս «Ս. Մեսրոպ Մաշտոց» աշա-

«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՀԱԼՎԱԶԱՅ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՆ ԱՐՈՒՏՍԱԲՈՅՐ ՀԱՃԵԼԻ ՊԱՇԵՐ ՊԱՐԳԵԷՅՑ

գին բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով,

ու խանդավառ ներկայութիւնը կը յուշէր, որ «Ս. Մեսրոպ Մաշտոց»-ի արժանաւոր զինուորներն էին, որոնք Հայաստանի դրօշը պարզած մուտք կը գործէին սրահ ու ինքնավատահ քայլերով բեմ կը բարձրանային:



կերտական երգչախումբը անգամ մը եւս հալէպահայութեան հրամցուց իր տարեկան համերգը:

Սրահի մուտքին, ժողովուրդին բաշխուեցաւ համերգին յայտագիրը, որուն մէջ հրամցուելիք երգացանկին կողքին, ներկայացուած էր Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական

ետքը ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին հայ եւ սուրիացի նահատակներուն յիշատակը:

Արաբերէն լեզուով բացման խօսք արտասանեց Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդի անդամ Գօգօ Հայկեան՝ անդրադառնալով երաժշտութեան ու երգին կարե-

Համերգին բացումը կատարուեցաւ Ն. Գեորգեանի «Աղօթք», «Ս. Մեսրոպ Մաշտոց» եւ «Հող Հայրենի» երգերով, որոնց յաջորդեցին Ա. Նազարեանի «Ուրախ ըլլանք», Բ. Կանաչեանի «Երգանուագ», Ս.

Վարդագարեանի «Թզուկների երգը», Ռ. Պետրոսեանի «Տիեզերք», Ա. Պապաճանեանի «Իմ երեւան», դաշնաւորումը՝ Յ. Օհանեանի եւ արաբական «Մալալին, Մալալին Ալ Սուրիին» երգերը:

Դադարէ մը ետք, երգչախումբի ժիր փոքրիկները շարունակեցին ելոյթը Եղիկեանի «Ես կամ», Ա. Դիւանեանի «Չիւտորիկն Եմ Ես Փոքրիկ», Ա. Յովհաննեսեանի «Նժդեհիկների Բայլերգը», Ա. Դիւանեանի «Միշտ Առաջ», Ա. Յովհաննեսեանի «Ծառայել Հայրենիքին», Ա. Մարտիրոսեանի «Մեր Անպարտ Բանակ» երգերով, այնուհետեւ հայրենասիրական երգերու շարքով:

Ապա հնչեցին արաբական «Մապրուք Նապրեք Եա Հալապ» եւ տողք. Ռաֆֆի Ապեճեանի Գործիքաւորած «Մենք Ենք Ու Սարերը Մեր», եւ «Միասնութեան Շուրջ»

պար» հայկական երգերը: Յայտագիրին Բ. բաժինը նուիրուած էր ՀՀ անկախութեան 100-ամեակին:

Աւարտին յանուն Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին սրտի խօսք արտասանեց Տեր Տաթև Աւագ Բահանայ Միքայելեան, որ բարձր-



րէն գնահատեց երգչախումբը, խմբավարն ու դաշնակահարը, ինչպէս նաեւ քուլիսներու ետին աշխատող տղաքն ու աղջիկները եւ Ուսումնական Խորհուրդը՝ դիտել տալով, որ Արամ Խաչատուրեանի, Կոմիտասի, Արմէն Տիգրանեանի նման արուեստագետներ ու Գայիանէ Սիմոնեան-



Տերեանի նման հոգատար խմբավարներ ծնած ժողովուրդի մը մշակոյթը դարձնելու կը ծաղկի հայ մասնակներու շրթներուն վրայ:

Համերգը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:

Պետիկ Աշոտեան



խորհուրդին խօսքը, ուր շեշտուած էր երգի ու երաժշտութեան անփոխարինելի դերակատարութիւնը ազգային արժեքներու, բարքերու եւ սովորութիւններու պահպանման մէջ: Համաձայն պատմութեան մատեաններուն, հայը կառչած մնացած է իր ազգին, հողին, կրօնքին ու մշակոյթին, որոնց շնորհիւ ալ ունեցած է երաժշտական հսկայ ընտիր գանձարան մը, ազգային, հայրենասիրական, քնարական ու այլ երգերու անթիւ հաւաքածոներ: Երգչախումբի գեղարուեստական ղեկավար Գայիանէ Սիմոնեան-Տերեան Նոյն գրքոյկին մէջ իր սրտին խօսքը արձանագրած էր՝ դիտել տալով, որ այս տարեշրջանի փորձերը սեղմ, կարճ ժամանակաշրջանի մը մէջ ամփոփուած էին, սակայն աշխոյժ, ժիր, երգը եւ երաժշտութիւնը սիրող պատանիներու մասնակցութեամբ, խումբը պատրաստուած էր ներկայանալու սիրուած երգերու գունեղ փունջով մը: Գայիանէ Սիմոնեան-Տերեան արձանագրած էր նաեւ, որ երգչախումբի նորանշանակ դաշնակահար-նուագակցող, երիտասարդ բայց խոստմնալից Յովհաննէ Օհանեան, իրեն վստահուած գործը բժախնդրութեամբ աւարտին հասցուցած էր:

Ժամը 6:15 էր, եւ տակաւին հանդիսատեսներէն ոմանք ուշացումով սրահ կը մտնէին...: Համեր-



ւորագոյն դերակատարութեան ժողովուրդներու յառաջդիմութեան ու սերունդներու դաստիարակութեան գործընթացին մէջ:

Հայերէն բացման խօսքով Ուսումնական Խորհուրդի անդամ Անի Գալտընեան շեշտեց, որ երաժշտա-



կան կրթութիւնը դրական ներգործութիւն կ'ունենայ պատանիներու հոգեմտաւոր աշխարհի կազմաւորումին մէջ՝ աւելցնելով, որ «Ս. Մեսրոպ Մաշտոց» երգչախումբը եղաւ այն երաժշտական դարբնոցը, որ իր երայաջորդ սերունդներուն փոխանցեց երաժշտական ոգեղէն եւ իմացական հարստութիւն՝ իր անջընջելի դրօշը քանդակելով մատողաշ փոքրիկներուն հոգեմտաւոր աշխարհին մէջ:

Ապա, օրուան հանդիսավար, Ուսումնական Խորհուրդի անդամ Սիլվա Ճապարջուրեան բեմ հրաւիրեց երգչախումբի անդամները:

Ուշագրաւ էր, երգչախումբի փոքրիկներուն մեծ թիւը: Անոնց ժիր

**Եթէ
Հայ ես,
Միացի՛ր**

Լռութիւնը իրաւունքի չի վերադարձներ

**Բողոքի հաւաք, որ տեղի պիտի ունենայ՝
22 Ապրիլ 2018-ին ժամը 5:00-ին
Ա.Բ.Ե.Ճեմարանի շրջափակէն ներս:**